ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ, ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյան**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝** **Աննա Միքայելյանի**

Քննարկվեց՝

12.05.2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա այլ հրատապ խնդիրներ:

1.1 ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման ուղղությամբ տարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց հետևյալ տեղեկատվությունը՝

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման գործընթացի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնված թվով 7 դպրոցների հանձնման կապակցությամբ կատարվում է ամենօրյա աշխատանք /փաստաթղթերի

ուսումնասիրություն, այցելություն դպրոց, քննարկումներ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակիցների հետ/ և արդյունքների մասին կազմվել է տեղեկանք, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

	Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ տարվող աշխատանքները**
1	«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեում, խնդրի կարգավորման ուղղությամբ սեղմ ժամկետում կառաջարկվի լուծման տարբերակ:
2	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականնում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**
3	«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ 1-ին փ., 26շ.	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեում, խնդրի կարգավորման ուղղությամբ առաջարկվել է տարբերակ, որը գտնվում է ուսումնասիրության փուլում:
4	«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ խոշորացված համայնք գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Կատարվել է չափագրում, կներկայացվի ինքնակամ շինության օրինականացման:

5	«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	Կատարվել է դպրոցի սեփականության վկայականի ուղղում: մարզպետի համապատասխան գրությամբ կուղարկվի Պետական գույքի կառավարման կոմիտե:
6	Արգինայի միջնակարգ դպրոց	Գ. Արգինա, Աբովյան 40	Բացակայում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:	**Պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկվել է մարզպետի համապատասխան գրություն կառավարության որոշման նախագիծ շրջանառելու համար:**
7	Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ Խոյ համայնք Գեղակերտ բնակավայր Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	Միջոցներ են ձեռնարկվում ինքնակամ շինությունների քանդման կապակցությամբ:Ճշտվում են հարևանությամբ գտնվող գույքի և դպրոցի սահմանագիծը:

1.2 Արմավիրի մարզում, ՀՀ պետական բյուջեի միջոցներով, տարբեր գերատեսչությունների պատվիրատվությամբ իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվեց հետևյալ աղյուսակի տեսքով՝

Արմավիր

Հ/Հ	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ%	Ծանոթություն
1	գ. Արաքսի Զ. Ավետիսյանի անվ. միջնակարգ դպրոց	Չի սկսվել	ՀՏԶՀ	350			
2	Խանջյանի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏԶՀ				Չի սկսվել
3	Նորավանի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏԶՀ				Չի սկսվել
4	Արմավիրի թիվ 2 հիմնական դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏԶՀ				Չի սկսվել
5	գ. Մյասնիկյան մարզադպրոցի կառուցում	545 օր	ՀՏԶՀ		407,100,000		Չի սկսվել

6	Նորավան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ	2023-25,06,2025	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	144	714,000,000	85	
7	Լենուղի համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ	2023-20,04,2025	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	144	820,000,000	75	
8	ՀՀ Արմավիրի մարզի «Զարիշատ(Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկա	2025	Առողջապահության նախարարություն		1,450,000,000		նախագծանախահաշվային փաստաթղթերի փուլ
9	ՀՀ Արմավիրի մարզ «Խանջյանի ԲԱ» ՀՈԱԿ	2025	ՀՏԶՀ		172,000,000		նախագծանախահաշվային փաստաթղթերի փուլ

Արմավիրի մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ

Մեծամոր

	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ %	Ծանոթություն
1							
2	Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոց	12,2023-12,2025	ՀՏԶՀ	432	2,400,000,000	65	
3	գ. Երասխահունի կրթահամալիր	14,05,2024-22,09,2026	ՀՏԶՀ	200+80	1,631,135,529	25	
4	գ. Հայկավանի կրթահամալիր	640 օր	ՀՏԶՀ	200+80	1,265,085,00	15	սկսվել է, շին թուլտվություն առկա չէ
5	գ. Նոր Արտագերսի կրթահամալիր	640 օր	ՀՏԶՀ	200+80	1,253,844,000	25	սկսվել է, շին թուլտվություն առկա չէ
6	գ. Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց	30,12,2024-30,12,2026	ՀՏԶՀ	432	2,499,829,399	35	
7	Ալաշկերտի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏԶՀ				Չի սկսվել

8	Գետաշեն համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ	2023-30,06,2025	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	144	886,000,000	30	
9	ՀՀ Արմավիրի մարզ «Վարդանաշենի ԲԱ» ՀՈԱԿ	2025	ՀՏՋՀ		172,000,000		նախագծանախահաշվային փաստաթղթերի փուլ
10	ՀՀ Արմավիրի մարզ «Տանձուտի ԲԱ» ՀՈԱԿ	2025	ՀՏՋՀ		172,000,000		նախագծանախահաշվային փաստաթղթերի փուլ
11	Հ-15, /Մ-5/(Նորապատ) - Արգավանդ –/Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ13+000 - կմ20+000 հատվածի հիմնանորոգում	05,2025-	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		1,384,136,439	5	սկսվել է
12	Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի կմ6+200 - կմ7+400 հատվածի հիմնանորոգում 1,2 կմ	2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		283,240,000	30	
13	Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի 4,2 կմ հատվածի հիմնանորոգում	2024-21,09,2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		911,000,000	85	
14	Տ-3-19, Արևիկ(Տ-3-50)-/Հ-15/(Տանձուտ) ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+400 հատվածի հիմնանորոգում	05,2025-09,2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		524,733,605	5	սկսվել է
15	Տ-3-18, Ակնալիճ(Տ-3-6)-Զարթոնք-Արևիկ(Տ-3-50) ավտոճանապարհի ՊԿ27+96-ում և ՊԿ30+94-ում կամուրջների հիմնանորոգում	2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		33,000,000		չի սկսվել
16	Ղարաղալայի պոմպակայնի մղման խողովակաշարի վթարային հատվածի վերակառուցում	2025	ՀՀ Ջրային կոմիտե		146,392,880		ավարտված է /ավարտական փուլ/

17	Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների,ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում	12,2024-2025	ՀՀ Ջրային կոմիտե		110,850,610		ավարտված

Արմավիրի մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ

Վաղարշապատ

	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ %	Ծանոթություն
1	«Վաղարշապատի հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Չի սկսվել	ԿԳՄՍ	675			
2	«Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N 10 ավագ դպրոց» ՊՈԱԿ	760 օր	ՀՏՋՀ	500	1,779,960,000	10	սկսվել է, շին թուլտվություն առկա չէ
3	ք. Վաղարշապատի Վ. Ռշտունու անվ. թիվ 11 հիմնական դպրոց	850 օր	ՀՏՋՀ	576	1,399,656,000	10	սկսվել է, շին թուլտվություն առկա չէ
4	ք. Վաղարշապատի Ե. Օտյանի անվ. թիվ 7 հիմնական դպրոց	Չի սկսվել	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	600			
5	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ Արմավիրի մարզի մասնաճյուղ/Վաղարշապատ/	18,11,2023-	ՀՀ կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամ		309,879,000		
6	S-3-29, /Մ-5/ (Զվարթնոց թաղամաս) – /Հ-13/ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+400 հատվածի հիմնանորոգում	05,2025-	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		737,049,589	15	սկսվել է

Արմավիրի մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ

Արաքս

	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ %	Ծանոթություն
1	Ջրարբիի միջնակարգ դպրոց	Չի սկսվել	ՀՏՋՀ	288			
2	«Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Չի սկսվել	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	144			
3	գ. Ջրառատի Թ. Խաչատրյանի անվ. միջնակարգ դպրոց	01,04,2024-20,12,2026	ՀՏՋՀ	432	2,526,139,138	25	
4	Մեծամորի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏՋՀ				Չի սկսվել
5	Արաքս խոշորացված համայնքի Ակնաշեն բնակավայրի մանկապարտեզ	2024-2025	ՀՏՋՀ	50	291,000,000	90	
6	ՀՀ Արմավիրի մարզ «Գայի ԲԱ» ՀՈԱԿ	2025	ՀՏՋՀ		172,000,000		նախագծանախահաշվային փուլ
7	ՀՀ Արմավիրի մարզ «Ջրառատի ԲԱ» ՀՈԱԿ	2025	ՀՏՋՀ		172,000,000		նախագծանախահաշվային փուլ
8	S-3-41, /Մ-3/ (Լուսագյուղ) – Ջրառատ ավտոճանապարհի կմ0+500-կմ2+600 հատվածի հիմնանորոգում	2025-25,09,2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		345,664,695	40	
9	S-3-42, /Մ-3/ Ջրարբի – Գայ- /Մ-3/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+700-կմ 2+700 հատվածի հիմնանորոգում	2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		490,418,362		նախագծի լրամշակման փուլ

Արմավիրի մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ

Խոյ

	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ %	Ծանոթություն
1	գ. Գեղակերտի միջնակարգ դպրոց	760 օր	ՀՏՋՀ	350	1,789,800,000	5	սկսվել է, շին թուլտվություն առկա չէ
2	գ. Ամբերդի Հ. Նավասարդյանի անվ. միջնակարգ դպրոց	762 օր	ՀՏՋՀ	288	1,755,650,400	5	սկսվել է, շին թուլտվություն առկա չէ
3	Հովտամեջի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՀ քաղաքաշինության կոմիտե				Չի սկսվել
4	Խոյ համայնքի Ծաղկունք բնակավայրի մանկապարտեզի կառուցում	2025-2027	ՀՏՋՀ	100	440,000,000	15	
5	Խոյ համայնքի Հովտամեջ բնակավայրի մանկապարտեզի կառուցում	420 օր	ՀՏՋՀ	70	252,900,000	չի սկսվել	
6	S-3-34, Վաղարշապատ (Անդրանիկի փողոց) - Ծաղկունք -Հովտամեջ - Հայթաղ -Արշալույս - /Մ-5/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ1+640-ում գտնվող կամրջի հիմնանորոգում	2025	Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ		37,957,200	չի սկսվել	

Արմավիրի մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ

Փարաքար

	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ %	Ծանոթություն
1	գ. Այգեկի Մ. Մովսիսյանի անվ. միջնակարգ դպրոց/վերանորոգում/	26,03,2025-26,07,2025	ՀՏԶՀ		98,490,000	70	
2	Նորակերտի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏԶՀ				Չի սկսվել
3	գ. Փարաքարի մարզադպրոցի կառուցում	08,05,2024-04,11,2024	ՀՏԶՀ		450,000,000	50	

Բաղրամյան

	Հասցե	Շինարարության սկիզբ և ավարտ	Պատվիրատու	Հզորությունը	Արժեքը /մլն դրամ/	Կատարված աշխատանքներ %	Ծանոթություն
1	գ. Վանանդի միջնակարգ դպրոց	26,12,2024-25,01,2027	ՀՏԶՀ	432	2,739,927,691	35	
2	Քարակերտի միջնակարգ դպրոց/վերանորոգում/	2025	ՀՏԶՀ				Չի սկսվել
3	Արմավիրի մարզի Արտամետ համայնքի «Զույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցում	12,2024-2025	ՀՀ Ջրային կոմիտե		354,240,000	30	

2. Արմավիրի մարզի Կրթական հաստատություններ կատարած այցերի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Մանվել Մելիքյանը զեկուցեց՝

Սույն թվականի **ապրիլի 14-ից մինչև մայիսի 16-ն** ընկած ժամակահատվածում Արմավիրի մարզպետ՝ Արգիշտի Մեխակյանն այցելել է մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող **18** հանրակրթական ուսումնական հաստատություններ:
1. 15.04.2025թ այցելել է **«Արմավիրի N10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Արմավիրի Մ.Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Արմավիրի Զ.Անդրանիկի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ**: Այցի ընացքում մարզպետը ծանոթացել է դպրոցների շենքային պայմաններին, դասապրոցեսի իրականացմանը:
«Արմավիրի N10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ուշադրություն է դարձվել շենքային անբարենպաստ պայմաններին: Դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները եղել են ոչ բավարար, այդ իսկ պատճառով դպրոցի վարչատնտեսական համակարգողին հանձնարարվել է բարելավել դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները: Դպրոցի

վարչատնտեսական համակարգողը տեղում չի եղել: Վարչատնտեսական համակարգողից պահանջվել է գրավոր բացատրություն:
Ընդհանուր դպրոցը, մարզադահլիճն ու հանդիսությունների սրահը հիմնանորոգման կարիք ունեն:

«Արմավիրի Զ.Անդրանիկի անվան N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ուշադրություն է դարձվել դպրոցի սանիտարահիգիենիկ ոչ բավարար պայմաններին և դպրոցի վարչատնտեսական համակարգողին հանձնարարվել է բարելավել դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները: Դպրոցի վարչատնտեսական համակարգողը տեղում չի եղել: Վարչատնտեսական համակարգողից պահանջվել է գրավոր բացատրություն:

2. **16.04.2025թ այցելել է «Արմավիրի N8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Արմավիրի N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Արմավիրի N9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ:**
Այցի ընթացքում մարզպետը ծանոթացել է դպրոցի շենքային պայմաններին, իրականացվող դասապրոցեսին, ծանոթացել դպրոցում առկա առաջնային խնդիրներին և հետևել լաբորատորիաների գույքի նպատակային կիրառմանը:
«Արմավիրի N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, «Արմավիրի N9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում շենքային պայմաններն անբարենպաստ են: Ընդհանուր դպրոցը, մարզադահլիճն ու հանդիսությունների սրահը հիմնանորոգման կարիք ունեն:

3. 28.04.2025թ. այցելել է **«Վաղարշապատի Զ.Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց», «Վաղարշապատի «Ներսիսյան» N6 հիմնական դպրոց»ՊՈԱԿ:**
Այցի ընթացքում ծանոթացել է իրականացվող դասապրոցեսին, լաբորատոր գույքի նպատակային կիրառմանը, դպրոցում առկա առաջնային խնդիրներին:
«Վաղարշապատի Զ.Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ում շենքային պայմաններն անբարենպաստ են: Ընդհանուր դպրոցը, մարզադահլիճն ու հանդիսությունների սրահը հիմնանորոգման կարիք ունեն:

« Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում նոր մարզադահլիճի կառուցման կարիք կա: Առկա է նախագիծ:
«Վաղարշապատի «Ներսիսյան » N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում բացակայում է մարզադահլիճ, ճաշարան, հանդիսությունների սրահ, ուստի նոր մասնաշենքի կառուցման կարիք կա:
4. **05.05.2025թ.**այցելել է **«Հացիկի Ա.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:**
Այցի ընթացքում մարզպետը ծանոթացել է դպրոցի շենքային պայմաններին, դասապրոցեսի իրականացմանը, քննարկվել է դպրոցում առկա առաջնային խնդիրները: Դպրոցի բակային հատվածը հիմնանորոգման կարիք ունի:
Դպրոցը հանձնված չէ պետական գույքի կոմիտեին:

5. 07.05.2025թ. այցելել է Մեծամոր համայնքի **«Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**: Ծանոթացել է կրթահամալիրի շինարարական աշխատանքներին:

6. 14.05.2025թ. այցելել է **«Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և «Արտիմետի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ:**
Այցի ընթացքում մարզպետը ծանոթացել է դպրոցի շենքային պայմաններին, դասապրոցեսի իրականացմանը, քննարկվել է դպրոցում առկա առաջնային խնդիրները:
«Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ընդհանուր իրավիճակը լավ է: Դպրոցը հագեցած է տեխնիկայով, ունի մարզասրահ, «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, փառքի սրահ և այլն:
Դպրոցն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք: Առկա ջեռուցման համակարգը հիմնանորոգման կարիք ունի, իսկ բակային տարածքը՝ բարելավման :
«Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ն ունի հիմնանորոգման կարիք:Դասարանները փոքր են , առկա է նոր կառուցված մարզադահլիճ,սակայն կան խնդիրներ, որոնք շտկման կարիք ունեն: Կից կառույցով սանհանգույցի կառուցման կարիք կա:
7.15.06.2025թ. այցելել է **«Մերձավանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ**: Շրջել և ծանոթացել է իրականացվող դասապրոցեսին:Դպրոցն ունի կահավորված առարկայական լաբորատորիաներ, որոնք նպատակային կիրառվում են դասապրոցեսի ընթացքում:
Մարզպետ Արգիշտի Մեխակյանը հանդիպել է տնօրենության. Որոշ դասղեկների և պատմության ուսուցչուհի՝ Ռոզա Դավթյանին ՝ վերջին իրադարձությունների հետ կապված:
Հանձնարարվել է, որպեսզի հանգիստ և խաղաղ մթնոլորտում իրականացվի դասապրոցեսը:
8.16.05.2025թ.այցելել է **«Խորոնքի միջակարգ դպրոց»ՊՈԱԿ,«Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Վաղարշապատի Հ.Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Վաղարշապատի Ե.Օտյանի անվանանվան N7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, «Վաղարշապատի Ռ.Պատկամնյանի անվան N9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ:**
Նշված դպրոցներում ծանոթացել է դասապրոցեսի իրականացմանը: Շրջել է դասարաններով, հանդիպել ուսուցիչների և սովորողների հետ:
«Խորոնքի միջակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում բացվել է **«Արմաթ» ինժեներական լաբորատորիա:**
«Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հիմնանորոգման կարիք ունի, ընդգրկված է «300 դպրոց 500 մանակապարտեզ» ծրագրին և ուսումնական տարվա ավարտին տեղափոխվելու է այլ դպրոց , որպեսզի մեկնարկվի շինարարական աշխատանքները :
«Վաղարշապատի Հ.հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ը կոսմետիկ վերանորոգման կարիք ունի, մարզադահլիճը անբարենպաստ է ուսումնական գործընթացը առավել նպատակային իրականացնելու համար:
«Վաղարշապատի Ե.Օտյանի անվանանվան N7 հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ը նույնպես ընդգրկված է **«300 դպրոց 500 մանակապարտեզ»** ծրագրի մեջ: Շրջայցից հետո մարզպետը հանդիպեց դպրոցի շենքը նախագծողի հետ, որի ընթացքում քննարկվեց շինարարական բազմաթիվ հարցեր:
Վաղարշապատի Ռ.Պատկամնյանի անվան N9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ- ի տարածքը բավականին մեծ է , ունի հիմնանորոգման կարիք:

3. Սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և ժամկետների վերաբերյալ զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը զեկուցեց՝

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Մեխակյանի կողմից տրված հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով բաժնի կողմից կատարվել են մշտադիտարկման աշխատանքներ, որի արդյունքում առանձնացվել են ավարտված, ընթացքի մեջ և ավարտական փուլում գտնվող, ինչպես նաև չսկսված սուբվենցիայի ծրագրերը:
2022-2024թթ. հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրեր, ընդամենը՝ **102 ծրագիր/368 ենթածրագիր,** որից՝

- ավարտված - 253 ենթածրագիր (2025թ.-ին՝ 26)
- հիմն.աշխ.ավարտված, լրացուցիչ աշխատանքներն ընթացքի մեջ գտնվող – 3 ենթածրագիր
- ավարտական փուլում գտնվող - 14 ենթածրագիր
- ընթացքի մեջ է - 30 ենթածրագիր
- չսկսված - 68 ենթածրագիր:

Ըստ համայնքների կազմված տեղեկատվության մեջ նշված են 2022-2024թթ. ընթացքի մեջ և ավարտական փուլում գտնվող սուբվենցիայի ծրագրերի/ենթածրագրերի պայմանագրերով սահմանված և երկարաձգված ժամկետները:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեց նաև Արմավիրի մարզպետի գլխավորությամբ կայանալիք մարզի խորհրդի առաջիկա նիստի կազմակերպչական և օրակարգի հետ կապված հարցերը:

ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրվեց հանձնարականներ.

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին՝ գրությամբ առաջարկել մարզի համայնքներին սահմանված ժամկետներում ներկայացնել առաջարկություններ կամ հարցեր՝ մարզի խորհրդի նիստի օրակարգում ներառելու նպատակով:

2. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանին՝ տրամադրել տեղեկատվություն սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ /արդյո՞ք կան ծրագրեր, որոնց փաստաթղթային ժամկետնեն ավարտված են, սակայն փաստացի աշխատանքները դեռ շարունակվում են/ և ինչ փուլում են գտնվում Էջմիածնի ԲԿ–ի վերակառուցման հետ կապված հարցերը:

3. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանին՝ տրամադրել տեղեկատվություն՝ «Գեղակերտի

միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի ուսումնական գործընթացը «Ծիածանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ում կազմակերպելու վերաբերյալ:

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-06-09 09:24:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան